



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 16

ՀԱՐԱՐ

3 ՄԱՅԻՍ 1908

ԱՊԱՋՆԱԿԱՐԳ ԵՄԻՈՂՇՈՒՄ

ԶԵՆԻԹ

ԱՊԱՋՆԱԿԱՐԳ ԵՄԻՈՂՇՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.


Պաճէ-Դարու, Օռոզաի-Պաք հասարակութեան դէմ, Թիւ 16

Հատը 40 փարս

(Դ. ԱՍԱԴՈՐԻԱՆ) ՏՐԻԿՏ ՄԵՐԻԵ ՄԱԽԵՍԻ — ԲԱԲ ԳԱԼ ԵԱԺԵՏԵԺԵ ՈՄՐՈ 52

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի հասարակութեան դէմ, Թիւ 52



Անհի, ասի ու ասի եւ ձեռքի
 Էփանգամայն մեկնաներ
 Եկը գեմուին

Անհարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ,
 բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
 մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
 եւ տաղաւկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՐԱՅԹԻՉ ԿԱՅԸ. ՊԱԼԱՏԱԼ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կաշարեւ լազործուածը,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:
 Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՄԱՍՆԱՎԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

- | | |
|----------------|--|
| ԲԵՐԸ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՍՏԱՐ | Զարը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆազայներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզօղլուի տունը:



ՐԵԻԵԼՔ ՕՐԱ-

Թերթ ազգային, գրական եւ ֆաղափական:
 — Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլ-
 տոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. գա-
 լառներու համար տարեկան 108 դր. վեց-
 ամսեայ 60 դր. և օտար երկիրներու համար
 տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Զեռքէ
 վաճառում՝ քաւ փարա: **ՐԵԻԵԼՔ**
 հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խը-
 նաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուած-
 ներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
 կութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խըմ-
 բագրութեամբ և իր կարող աշխատակիցնե-

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տե-
 ղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-
 ԿԵՐՍԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր
 ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
 բար: Ծանօթ Դէմքեր և շերտերն ալ տեսա-
 րաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մա-
 նագիրտական յօդուածները, եկեղեցական,
 կրօնական, տնտեսական-սեղանաւորական,
 երկրագործական, իրաւաբանական եւայլն,
 բաց ի գրական, բանասիրական գրուածքնե-
 րէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն
 ու բաժանորդագին շաբաթ է ուղղել Տէր և
 Տնօրէն Գարեգին էֆ. Պոյաճեանի հասցէին,
 Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հա-
 տատուած են թերթին ապարանն ու խըմ-
 բագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 36

ՇԱՐԱԹ

3^Է ՄԱՅԻՍ 1908

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՄ

ԵԹԷ ԿԸ ՀԱՃԻՆ

Իրենց հայրիկէն մնացած հարստութիւնը մոխած մարդիկ քաջ գիտեն թէ ի՞նչ կը նըշանակէ փարան լմնցուցած ըլլալը, երբ ո՛չ դրամ քաշելիք աղգական կը մնայ ա՛լ, ո՛չ ալ ... ծախուելիք կալուած:

Մէյ մըն ալ գրպանին կը նային ու կը տեսնեն որ ... մափ՛ե:

Պարա՛ս է քսակին, ինչպէս աշխարհիս բոլոր վայելքները:

X

Ասկէ աւելի սոսկալի է վիճակը այն գըրողին, որ կը տեսնէ յանկարծ թէ գրելիք բան չէ՛ մնացեր ա՛լ, սեռմայե՛ն հատեր է...:

Գանկին մէջ կը փնտռէ և կը տեսնէ թէ ա՛լ նոր նիւթ չկա՛յ հո՛ն, որ հնա՛վաճառի խանութ մըն է դարձեր ա՛լ:

Ամէն բանի վրայ գրեր է, բամպակի ու չամիչի վրայ, ինկած կիներու և բարձրացած

կիներու վրայ, պալաղդին ու գուգիցին վըրայ, հայ գրականութեան և թիպէթի վրայ, ամուսնալուծումի և Հորոյի վրայ, մինչեւ անգամ չէ մոռցած իղմիրցի Գասպարեանը:

Փութա՛մ յայտարարել թէ նոյն կացութեան մէջ կը գտնուի՛մ, երբ քսաներեք գարուններս ողջունած եմ դեռ հաղիւ:

Երեւակայեցէք թէ ի՞նչ պիտի ըլլամ վաթսուներս:

Ո՛չ արեւին տակ նոր բան մնացած է, ո՛չ ալ իմ գրչիս տակ, աւա՛ղ:

Ընթերցողս որ քառասուն փարա կը վըճարէ, կը պահանջէ որ անպատճառ ահագին գիւտ մը ընեմ իրեն, և ամէն անգամ որ չյաջողիմ նոր բան մը ըսել՝ երեսը կը թըթուեցնէ, որովհետեւ, եօ՛հեհի՛մ, մարդը քառասուն փարա կուտայ կոր:

X

Սոհարարը իրաւունքը ունի շարաթը եւրեք անգամ բիւաւ կերցնելու ձեզի շարունակ, բայց մենք իրաւունք չունինք մեր կեանքին մէջ մէկ ըստւածը մէջ մըն ալ կրկնելու:

Գինեւլաճառը ամէն օր նոյն գէշ գինին կը ծախէ, սրճեփը ամէն օր նոյն սուրճը կ'եփէ, կազեօզաւաճառը՝ հարկ չի տեսներ ամէն օր տեսակ տեսակ կազեօզներ հնարելու, բայց վաճ մեր գլխուն, եթէ մէկ բանը երկու անգամ կրկնենք:

Եւ պէտք է գիտնալ թէ՛ այժմեական ըլլալու համար ամէն տարի Զատիկին Զատիկի վրայ պիտի գրենք անսլաւաճառ, Ծնունդին՝ Ծնունդի պատմութիւն մը պիտի չինենք, ապրիլ մէկը՝ առանց ապրիլ մէկի պատմութեան չերթար, մայիս ամիսը իր մասնաւոր յօդուածները ունի:

Կը վստահեցնեմ ձեզի թէ՛ շատ աւելի դժուար է գրագէտ ըլլալը, քան թէ պանքէր կամ վաճառական:

Բայց եկէք տեսէք որ պանքէրները միշտ գրած կը շահին, և գրագէտները շատ անգամ հիւանդանոց կ'երթան, ո՛չ ... պտըտելու, ալ մնալու համար, աւա՛ղ:

Աշխարհ ասանկ քե՛րս է ահա՛:

X

Յաճախ մեզի համար կը լսեմ մայրիկէս.

— Բայց դեռ անցած տարի գրած էիք այս բաները ...

Ի՛նչ կ'ուզէք դեռ. դոնէ մենք խղճմտութիւնը ունինք անցեալ տարուան ըսածնիս միայն այս տարի կրկնելու, հապա անցած շարթուան ըսածնին այս շարթու իսկ դարձեալ կրկնողները ...:

Եւ ի՛նչ նոր բան կ'ուզէք որ ըսէ գրագէտը, երբ աշխարհ նոյնը կը մնայ, մարդիկ նոյնչափ անխելք են, կիները նոյնչափ թեթեւամիտ, սեւը՝ միշտ սեւ ե՛ւ ճերմակը՝ միշտ ճերմակ, աղջիկները երբէք տարբեր կերպով չեն չիկնիր, պանդոկատէրերը միշտ խազրիս կը նետեն, կիները միշտ ... թեւերնուն մորթը ցուցնելու համար կը մարին:

Եթէ աշխարհ փոխուելու ըլլար ամէն օր, մենք ալ բնականաբար պիտի փոխէինք մեր նիւթերը, բայց քանի որ աշխարհ անփոփոխ կը մնայ, հարկ չեմ տեսներ ամենեւին գրած-նիս փոխելու:

X

Ահա մայիս է, վստահ եմ որ Հանրագիտակի խմբագրապետը պիտի յանձնարարէ իր աշխատակիցներէն մէկուն:

— Ես այժմեական թերթ կը հանեմ կոր, այս շարթուան համար մայիս մէկի վրայ բան մը կ'ուզեմ:

Ես վստահ եմ որ խեղճ աշխատակիցը՝ ակամայ մորթուելու դատապարտուած ոչ-խարի մը նման՝ պիտի գրէ թէ մայիսը կիներու և ծաղիկներու ամիսն է, կիները ծաղիկներու չափ փափուկ են, մայիսը՝ Աստուածածնին ամիսն է, վարդերը կը բանան իրենց կոկոնները, վարդամատն արշալոյս, ծով, զեփուռ, ալիք, մարգագետինները կը կանանչան, էչերը կը գռան ... և դեռ քախրմ մը պօ՛ճ լաճեր, որոնք Հովնաթանի փեր ո՛վ գիտէ քանի անգամ կրկնուած են՝ իրենց երեւակայելի ու աներեւակայելի բոլոր վառ-եանդներովը:

Ես չեմ դատապարտեր ամենեւին այս կերպով գրող խմբագիրը, նոյն բանը պիտի ընէի ես ալ, եթէ իր տեղը ըլլալի ... շարաթականիս սիրոյն, որովհետեւ պէտք է գիտնալ թէ՛ մենք շատերուն ըրած գրականութիւնը ... շարաթականներու վրայ հիմնուած է և ոչ միտքի վրայ:

Ի՛նչ նոր բան կարելի է գրել մայիսի վերայ, երբ մայիսը՝ երբէ՛ք ձմեռ ատեն կամ աշնան և ո՛չ իսկ ամառը կուգայ:

Միշտ գարնան կուգայ մայիսը, և գարնան անսլաւաճառ վարդերը կը ծլին, սոխակները կ'երգեն, աղջիկները կը խնդան, զեփուռը կը փչէ, ալիքները կը վէտվէտին, էչերը կը գռան ...:

Ի՛նչ կուզէք որ ընէ խեղճ խմբագիրը, որ չիկնար ամէն բոլի տիեզերքին գնացքը փոխել, երբ միշտ այսպէս կ'ըլլայ, հազարաւոր տարիներէ ի վեր, երբ խմբագիր արարածը չէ՛ր ստեղծուած տակաւին:

«Քանի որ միշտ նոյնն է բնութեան մէջ, ինչո՞ւ նոյնը չըլլայ գրականութեան մէջ ալ» կը խորհին իրաւամբ խմբագիրները և անցած տարուան գրածնին այս տարի ալ նոյն եղանակին կը գործածեն, մինչեւ որ հիմնաւորով ա՛լ անգործածելի դառնայ, նման իրենց կօչիկներուն, զորս չեն յօժարիր հանգստեան կոչել, մինչեւ որ չորս անգամ պալաւմա չուտէ:

X

Երբ երկու սիրահարներ գլուխ-գլխի մը-
նան, միշտ մի եւ նոյն խօսքն է զոր կը փո-
խանակեն. — « Զիս կը սիրե՞ս: — Ո՛հ... կը
պաշտեմ »:

Ահաւոր է եւ ա՛յսպէս ըսած են, իսա-
հակ եւ Ռեբեկայ նո՛յնը կրկնած են, Պօղ եւ
Վերգիլնէ՛ նմանապէս, Տաֆնիս եւ Գլօէ՛
նո՛յնպէս, եւ աշխարհիս մինչեւ վերջը նոյն-
պէս պիտի ընեն մարդիկ, վերոյիշեալ փա-
փուկ պարագային:

Զմեռը մի՛շտ ճերմակ ձիւն կուգայ, կար-
կուտը մի եւ նո՛յն եղանակով կը տեղայ, կի-
ները միշտ նո՛յն կերպով զաւակ կը մեծցնեն,
կերակուրը միշտ բերնով կ'ուտուի, հոտա-
ռութիւնը աշխարհիս ստեղծուելէն ի վեր
քիթէն կ'առնուի, չուկացիները ամէն օր աչք
աչքի մարդը կը խաբեն, ծառը գետնէն կը
քուռնի, պիտը՝ չրթունքէն, կիները չեն գը-
թար մինչեւ որ վստահ չըլլան թէ գրպան-
նիս լեցուն է, Պ. Թոքաթլեանը երբէք ձրի
չի կերցներ իր կերակուրը, աղջիկները միշտ
խենդ կը դառնան « Էրիկ » կոչուած պտու-
ղին համար ...:

Արդ, Աստուծոյ սիրո՛ւն, ի՛նչ սիրտով,
ի՛նչ խիղճով եւ ի՛նչ սայլորով նոր բան կը
շարահանջէք մենէ, երբ ամէ՛ն ինչ հին է, ան-
փոփոխօրէն կրկնուա՛ծ, աշխարհ միշտ կը
շարահայ ձանձրանալիօրէն նո՛յն կերպով, կի-
ները նո՛յն կերպով գլխէ կ'ելլեն, Իզմիր
միշտ չամիչ ու թուզ կ'արտադրէ:

Ամէն օր իրար տեսած ատեննիս՝ « բարի
ջո՛յս » կ'ըսենք, իրիկունը՝ « բարի իրիկո՛ւն »,
առաւելիու գացած ատեննիս՝ « գիշեր բարի »,
սեղանի վրայ՝ « բարի՛ ասործակ », չոգնաւի
մէջ՝ « բարի՛ ճամբորդութիւն », երբ հիւան-
դութենէ մը աղաւթինք՝ « անցած ըլլա՛յ »,
երբ մէկը մեռնի՝ « գլուխնիդ ողջ ըլլա՛յ »,
երբ ծանօթ մը այցելէ ձեզի՝ « աս ի՛նչ հով
փչեց », երբ բարկանանք՝ « գետնին տակը
անցնի՛ս », երբ չհաւնինք՝ « զի՛ւք », երբ աղ-
ջիկ մը տեսնենք՝ « ա՛հ », երբ կին մը նշմա-
րենք՝ « օ՛հ », երբ սիրահարուինք՝ « աւա՛ղ »,
երբ ապտակ մը ուտենք՝ « ա՛յ », երբ թօհաֆ
ըստ մը տեսնենք՝ « քա՛ մարիկ », երբ վը-
րէժնիս առնենք՝ « օ՛խ », երբ աղջիկ մը մե-
զի Ժպտի՝ « Աստուա՛ծ իմ », երբ սնանկա-
նանք՝ « ապուրը կլլեցի՛նք », երբ մէկը նա-
խատել ուզենք՝ « աւանա՛կ ... »:

Արդ, երբ այս ա՛յսպէս է, ի՛նչ իրաւուն-
քով նոր նիւթ կը պահանջէք մենէ եւ երբ
չկարենանք նոր բան մը գտնել, կ'ելլէք բա-
ցազանչելու. — « Է՛յ, էրկա՛ն ըրիր, հասկը-
ցա՛նք ... »:

×

Երբ յանձնարարէք որ Գոլանճեանի վրայ
յօդուած մը գրեմ, միշտ պիտի ըսեմ թէ՛
Պ. Եդուարդ Գոլանճեան սրամիտ տղայ մըն
է, մարդ հաճոյքէն կը մեռնի անոր հետ խօ-
սած ատենը, Ֆրանսերէնը՝ Պրանսուա Գո-
բէէն լաւ կը խօսի, ասպետական քաղուածք
մը ունի փողոցը ...:

Ըսէք ո՛ր Խնտրայի վրայ գրեմ, եւ միշտ
պիտի ըսեմ ձեզի որ Խնտրա Սկիւտարի մե-
ծագոյն հանճարն է, անոր ոճը ա՛յնչպիսի
բարձր է որ ո՛չ մէկ մահկանացու կրնայ թա-
փանձել, գէ՛մքը՝ իմաստասէր-բանաստեղծի
կիսաստուեր մըն է, պիտին թելերէն իմաս-
տութիւն կը ծորի ...:

Կը փափաքի՛ք որ ըսեմ թէ ի՛նչ կը խոր-
հիմ կեդրոնական վարժարանի մասին, պիտի
զրուցեմ որ կեդրոնականի աշակերտները ա-
մէնքն ալ քաղաքավար, կենցաղագէտ եւ
փափուկ տղաք են առանց բացառութեան:

Պէրպէրեան վարժարանը ինձի համար
Սկիւտարի համալսարանն է, աշակերտ-
ները՝ բոլո՛րն ալ համալսարան, որոնք ի-
մաստակութեան հովը իսկ չունին, համեստ
են, ինքզինքնուն չեն հաւնած ամենեւին,
չեն գիտեր ի՛նչ ըսել է պարծենալ եւ գիտեն
մարդու հաւնիլ ...:

Հարցուցէ՛ք թէ ի՛նչ կը խորհիմ Վահրամ
Թաթուլ բանաստեղծին նկատմամբ, եւ պիտի
ըսեմ թէ՛ գրած բոլո՛ր բաները մէկիկ մէկիկ
կը հասկնամ, մանկապարտէզի տղաքը՝ տրա-
մարանութեան եւ ոճի պայծառութեան վար-
ժուելու համար պէտք է զայն կարդան:

Կը հաճի՛ք գիտնալ թէ՛ ի՛նչ է գաղափա-
րըս մեր վարժուհիներու մասին, պիտի պա-
տասխանեմ որ սրամիտ աղջիկներ են, ծեք-
ծեքումին ի՛նչ ըլլալուն անտեղեակ, չֆիլի-
դող, զարգացած, սովորեցուցած բանբրնուն
նախապէս քաջատեղեակ:

Կը հետաքրքրուի՛ք գիտնալ թէ՛ կարծիք
ունիմ անձիս նկատմամբ, պիտի յայտարա-

րեւ թէ՛ սրամիտ մարդ մըն եմ, հաճելի, հարուստ, ազնուահոգի եւայլն . . . :

Եւ հարիւր տարի կրնաք հարցնել ինծի այս բաները, միւրոն անգամ կրնամ գրել նոյն նիւթերու վրայ և միւրոն անգամուն ալ տարբեր բան մը չպիտի զրուցեմ, քանի որ տարբեր բան մը չեմ խառներ :

Զպիտի սպասէիք կարծեմ որ նոր բան մը բաժնի ըլլալու տենելով՝ Գոլանճեանը անհաճոյ մարդ մը չի նշել, ինտրան՝ անտաղանդ տղայ մը, Պէրպէրեանի աշակերտները՝ իմաստակ, վարժուհիները թեթեւ, կեղծոնականի աշակերտները՝ անկիրթ, օ՛հ, ո՛չ, ո՛չ, ո՛չ :

X

Պօլը և լայնքը կը չափեմ ես այն մարդուն — Վիգթոր Հիւկոն մինչեւ Ստեփան Խաչուրի, Հոմերոսէն մինչեւ Ստեփան Երկանեան, — եթէ կարենան կեանքերնուն մէջ մէկ ըսածնին մէջ մըն ալ չըսել :

Օրերը օրերու կը նմանին, տարիները տարիներու, կապիկները կապիկներու, կիները կիներու, մարդիկը մարդոց, և յօդուածները միւս յօդուածներուն :

Մի՛ դարմանալի պահանջներ ընէք մենէ, երբ նշմարէք թէ քանի մը յօդուածներ ունինք միայն, որոնց ձեւը փոխելով սկիզբէն ի վեր կը հրամցենք մեր ընթերցողներուն, որոնք չարունակ կը կլեն :

Մի՛ ալ ըսէք ինծի,

— Այս չաթիւնան գրածնիդ տասը տարի առաջ անգամ մը կարգադի ֆրանսերէնի մէջ :

Որովհետեւ ասկէ աւելի մեծ անմատու թիւն չըլլար :

Ձի՛ կրնա՛ր ըլլալ որ տասը տարի առաջ ուսան մարդուն մտածածը ֆրանսերէն, տասը տարի վերջը ես ալ խորհիմ հայերէն :

(Այս պաշտպանութիւնս քեզի՛ համար է, ո՛վ Յարութիւն Ալիբար և ընկ.) :

Եւ կամ ինչո՞ւ անպատճառ մենք ըլլանք բանագոյնութեան հեղինակը. — չի՛ կրնար ըլլալ որ ֆրանսացի հեղինակն ալ տասը տարի առաջ մենէ՛ գողցած ըլլայ իր գրածը որ ա՛յնչափ կը նմանի մերինին :

X

Վերոյիշեալ տողերը դրեցի՝ ապացուցանելու համար թէ՛ աշխարհիս մէջ նոր բան չկա՛յ և ո՛չ ալ Թէր գրչին տակը նոր նիւթ :

Թերեւս այս գրածս ալ ուրիշ անգամ մը գրած եմ նախապէս :

Եթէ ես չեմ գրած, ուրիշ մը գրած է ապահովաբար :

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՍ

— * * *

Ատ ալ գլխէս անցաւ :

Եւ ո՞վ է ան, որ կեանքին մէջ գոնէ անգամ մը չէ փորձած անճանապահ ըլլալ, միշտակ եղանակները տարբեր են. ոմանք վախճանակ ատճանակով մը իրենք զիրենք ունենացնելու՝ դրագրի պաշտօն մը կատանձանին հայ վաճառականի մը քով և ուրիշներ ամուսնութիւնը կընտրեն իրեն ամուսնութիւնը կընտրեն իրեն ամուսնութիւնը :

* * *

Վայրկեան մը ունեցայ կեանքիս մէջ ուր ամէն բան սեւ կերեւար աչքիս :

Եւ որովհետեւ Լօլա դադրած էր զիս սիրելէ, կը կարծէի թէ արեւը այլ եւս իրաւունք չունէր առտուն կանուխ ելլելու և իրիկունքը մօտ չի կոխած հրապարակէն քաշուելու, ծագիկները, թռչունները, երաժշտութիւնը և խորտեալ աղջիկները՝ զորս այնքան կը սիրէի երբեմն, դադրած էին յանգրած որ եւ է հրապարակ ունենալէ : Դատարկութիւն ամէն կողմ, պատրանք ամէն բանի մէջ, ունայնութիւն և ոչնչութիւն ամէն տեղ և ամէն ժամանակ :

— Ապրիլ չարժեք կըսէի, քսան տարեկանի անխորձութեանս մէջ. երկրիս հետ ա՛յլ որ եւ է կապ չունիմ, բան մը չի կայ որ զիս վար դնէ հոս, քանի որ Լօլա . . . :

* * *

Լօլա՛ . . . բայց չէք զիտեր ինչ աղջիկ էր ան :

Հազիւ քսան տարեկան, խոշոր աղւոր, աչքեր ունէր, ճերմակ փայլուն ակունքեր, պզտիկ սիրուն բերան մը, երկայն մազեր, ճիշտ ինչպէս կուսնեան այն աղջիկները որոնք սիրահարի մը գրչին տակ կիսնան :

Դպրոցէն կը սիրէինք զիրար, հետեւաբար եթէ ոչ ուսմունքնիս, բայց գոնէ մեր սէրը հիմնական բան մը ունէր իր մէջ :

Անանկ աղւոր բաներ կըսէինք իրարու որ . . . Եւ ինչ հարկ կայ որ հոս կրկնեմ մեր երբեմնի ըսածները. Ձինն սկսեալ մինչեւ Բարիկ ամէն սիրահար մի եւ նոյն շտրականք :

կը կարդայ իր սիրած աղջկան, միայն սատարեցեալ թիւնով որ Զինացի սիրահարը զգացածը կը զրուցէ, իսկ Բարիզինը՝ մտածածը:

* * *

Եւ որովհետեւ Զինի և Բարիզի ճիշտ մէջտեղը կը գտնէի, Պոլիս, ըրած սիրահարութեանս մէջ թէ զգացում կար և թէ միտք, առաջինով Լօլան կը գգուէի, իսկ երկրորդը կը սաւառնէր ապագայ աներոջս դրամարկզին շուրջը:

Այն օրը որ առանց ինծի իմաց տալու որոշեցին Լօլան կարգել, ամերիկացի հայու մը հետ — ապուշուրիւն մը որ այնքան կըլլայ, որովհետեւ չեմ հասկնար թէ ինչպէս կարելի է աղջիկ տալ մարդու մը որ Ամերիկա բնակելուն համար ստիպուած է մեր քնացած ատենը արթննալ և քնանալ երբ մենք կարթննանք, անպատեհութիւն մը որ ամէնէն շատ աչքի կը զարնէ ամուսնութեանց պարագային մանաւանդ — այո՛, այն օրը որ տեսայ թէ Լօլան ուրիշներ պիտի ըլլար, մէկ երկու ըսելու ժամանակ չի տուի ինքզինքիս և որոշեցի մեռնիլ:

* * *

Մինակ՝ մարդու պէս մեռնելու ճամբան գտնելու էր: Շատ ... փառք Աստուծոյ եթէ ոչ ապրելու բայց գոնէ մեռնելու համար միջոցներ չեն պակսիր աշխարհիս վրայ:

Առաջինը որ միտքս եկաւ, սենեակին մէջ ամուսնի վառելով խեղդամահ ըլլալն էր, բայց ետքէն մտածեցի թէ այդ տեսակ անձնասպանութիւնը աղքատ, լքեալ աղջիկներուն առանձնաշնորհումն է և ինքզինքը յարգող մէկը պէտք չէ դաշի անոր:

Դանակով անձնասպանութիւն, ատ ալ աղէկ չէր, որովհետեւ ձեռքին մէջ դանակ ունենալը քիչ մը պիտի յիշեցնէր ճէնճոտ մսավաճառի աշկերտները, որոնց վրայ երբ նայիս սիրտդ վեր կուգայ:

Զուանով կախուիլ, ատ ալ գործիս չէր գար, որովհետեւ քանի մը անգամ կախուած մարդու հանդիպած եմ և սա համոզումը գոյացուցած եմ որ, իրաւ, մարդուս համար անկախ դիրք մը ունենալը շատ աղւոր բան է, բայց կախեալ դիրքը բնաւ:

Միջոց մը եւս կար՝ թոյնը. բայց, եղբայր, այս օրուան օրս վստահութիւն չեմ

կրնար ունենալ դեղագործի մը վրայ. շատ անգամ կը պատահի որ բժշկուելու համար դեղ մը կառնես և թոյն կուտան քեզի և ինչէն գիտնամ որ թոյն ուղած օրս ալ անվնաս բան մը չպիտի տան ինծի:

Պատուհանէն վար նետուել, լաւ, բայց ինչպէ՞ս ատենս մէկ կողմս կոտորի՞ նէ:

Ծոմապահութեամբ մեռնիլ, ատոր ալ ասոր ժակս արդեւք կըլլար:

* * *

Վերջապէս գտայ:

Ծովը նետուելէն աւելի խեղացի, աւելի ապահով, աւելի խնայողական ճամբայ չիկար. այո՛, այո՛, ծովամոյն ըլլալ, թող տալ որ ձուկերը ուտեն քեզ, փոխանակ դուն զանոնք ուտելու:

* * *

Մնաս բարով Լօլա, մեռնիլ կերթամ կոր: Աղօթք մը ինծի համար և աշխարհ քեզի թող ըլլայ:

Հոգ չէ թէ արքայութեան դռները երեսիս պիտի գոցուին, բայց գոնէ, մատուցեալ ծայրովը, պաշիկ մը զրկէ ինծի հեռուէն:

Կը յիշե՞ս, Լօլա, առաջին անգամ երբ քեզ տեսայ, վարդագոյն մետաքսէ ջօրսած մը հագած էիր ... բայց աւսող, այս ամէնը յիշելու ժամանակ չունիմ, մեռնիլ կերթամ կոր, անգո՛ւթ:

* * *

Եւ իրաւ ալ ծովեզերքը գացի իմ սեւ խորհուրդս կատարելու համար ... Բայց վերջի վայրկեանին միտքս ինկաւ բժշկիս յանձնարարութիւնը.

— Պաղ առնելէ զգուշացիր, պատուիրած էր ինծի:

Ուրախ զուարթ տուն դարձայ:

Եթէ հարկ ըլլար որ ամէն ատեն աղջիկ մը կարգուէրուն՝ իր նախկին սիրահարները անձնասպան ըլլային, այսօր աշխարհիս վրայ մարդու երես քիչ մը դժուար կը տեսնէինք:

Ե. Ա. ՓԻՍԻՐ



Ա Կ Ռ Ա Յ Ի Ց Ա Ի Ը

Այս անգամ պիտի խօսիմ ակուայի ցաւին վրայ, proprement dite, անո՛ր որ աւելի մաքուր է և աւելի պատշաճ:

* * *

Ներկայ սերունդին բերանը հաւաք կըլեր է: Ժամանակին մարդիկ քոլերա, ժանտախտ, թիֆո կ'ըլլային:

Փա՛ռք Աստուծոյ, անոնց մօտան անցաւ, հիմա ամէն մարդ ակուայի ցաւ ունի:

Հարբուխէն և գլխի ցաւէն աւելի սովորական բան մը դարձաւ ակուայի ցաւը:

Պզտիկ աղջիկներ և պզտիկ տղաք բոլորն ալ ակուայի ցաւ ունին այսօր:

Չեմ գիտեր թէ ծնողքները ի՛նչ վրաձգողութիւնով կը շինեն կոր հիմա իրենց զաւակները, որ անոնց գլուխները ա՛յնչափ տուկար կ'ըլլան՝ ա՛յնչափ մատաղ հասակի մը մէջ:

Մեր սրբազան նախնիք ակուայի ցաւին ի՛նչ ըլլաւ չէին գիտեր. — ահա՛ թէ ինչո՛ւ այն ատենները ատամնաբոյժ չկար, մինչդեռ այսօր՝ գոմիսիօնիէ, սափրիչէ, փաստաբանէ և նոյն իսկ խոդի-բոքի պաշտօնեաներէ աւելի առատ են քան իսկանները:

Երեք ամիս ատամնաբոյժի մը քով դուռ բացող չրախը՝ վարպետ ատամնաբոյժ է չորրորդ ամսուան առաջին օրը:

Մեր հայրերը իրենց ակուաներովը ընկոյզ կը կոտրէին, մինչ հիմա անգամ մը քսան տարեկանը թեւակոխելուս՝ ա՛լ հացը անգամ չենք կրնար կոր ծամել:

Ու՛ ըստ իս՝ ժանտախտէն, քոլերայէն, թիֆոյէն չատ աւելի սոսկալի է ակուայի ցաւը. գոնէ առաջինները մարդը մէկ շունչով կը տանին, մինչդեռ ակուայի ցաւը տարիներով մարդուս քաշել կուտայ, եթէ երբէք բոլոր ակուաներնիք քաշել չտաք:

Փտա՛ծ ակուաներ, փտա՛ծ ստամոքս, փտա՛ծ մարմին, փտա՛ծ երիտասարդութիւն:

Ահա՛ թէ ինչո՛ւ այսօրուան ամուսնութիւնները երջանկաբեր չեն:

Ի՛նչպէս կ'ուզէք որ հիմակուան երիտա-

սարդը իր կնոջը համը առնէ, երբ չէնք շնորհք կերած ապուրին համը իսկ չի կրնար կոր առնել, ա՛յնչափ փտած են ակուաները:

Սէրը դօրաւոր ակուաներ կը պահանջէ, մինչդեռ մեր արդի երիտասարդութեան ակուաները ... կե՛ղծ են բոլոր:

* * *

Պատուոյ խօ՛սք, քաղաքավարութիւն ըսուած բառէն տարրական տեղեկութիւն մը իսկ չունի ակուայի ցաւը, և վստահ եմ որ Պառնոսի Սթաֆի ոչ մէկ գիրքը կարդացած է:

Երեկոյթի՛ մըն էք, մարդո՛ւ հետ կը խօսիք կոր, զբաղա՛ծ էք, մէյ մըն ալ կը նայիք ... ակուայի ցաւը կը տնկուի՝ քաֆ չուսնցող առնելիքւորի մը նման:

Ճիշդ տիկինի մը դարպասած վայրկեանս նիդ կ'ընտրէ անիկա՝ ձեր բերնին մէջ մտնելու համար:

Չուարճանալու համար պտոյտի կ'երթաք և ահա՛ ակուայի ցաւը, որուն միտքը կ'իյնայ յանկարծ ձեզի ընկերանալ անհրաժէշ:

Անօթի փորանց փառաւոր սեղա՛ն մը նստած էք, ուր պիտի ուտէք կերակուրներ՝ զորս ճաշակելու առիթը չունիք ամէն վայրկեան ձեր տունը՝ ակուայի ցաւը հո՛ն է անպատճառ՝ լոկ ձեր ախորժակը գոցելու նպատակով:

Հիմէնեան սենեակէն նե՛րս պիտի մտնէք առաջին գիշերը, ակուայի ցաւը ձեռնէ առաջ հո՛ն է:

Սրամիտ խօսակցութեան մը մէջ էք, և ահա՛ ակուայի ցաւը, որ ձեր քիթը բերանը ճնւմուռ ճնւմուռ կ'ընէ:

Քարոզիչները պիտի ըսեն ձեզի որ՝ իրենց ակուայի ցաւը միշտ կը սպասէ ճիշդ ա՛յն պահուն, որ եկեղեցիին բեմը պիտի ելլեն՝ քարոզին խօսելու համար:

Բաւական է որ դերասան մը կարեւոր դեր մը ունենայ, որպէս զի ակուայի ցաւն ալ միասին իր դերը ստանձնէ նոյն գիշերը:

Ակուայի ցաւի նման. gâte-plaisir մը ...

տաք ջուրին մէջ պաղ ջուր թափելու հա-
մար մէկ հատիկ է ան:

Մինչեւ այսօր չեմ կրցած գլուխ-գլխի
մնալ սիրած մէկ օրիորդիս հետ, առանց որ
ակռայի ցաւը չի միջամտէր՝ անուելի դժբան-
չիս նման:

Երբ քովերնիս ուրիշներ ըլլան, ակռայի
ցաւը երեսը անգամ չի ցուցներ:

Բայց, բաւական է որ սալօնին մէջ մի-
նակնիս մնանք պահ մը և ես պարտաւորուիմ
սիրոյ յայտարարութիւնս ընելու, և անա՛...
ակռայի ցաւը ծայր կուտայ:

Կարծէք դիտմա՛մք կ'ընէ անպիտանը:

Կրնաք շատ սրամիտ գտնել դուք այս
ակռայի ցաւը, բայց, աւելի աղէկ ըմբռնի-
նել տալու համար ձեզի, կը մաղթեմ որ իր
այս սրամիտ կատակները ձեզի ալ ընէ:

* * *

Եւ գիտէ՞ք ի՞նչ պինդ-գլուխ է, ակռայի
ցաւը բաւած եօթնագլուխ ճիւղաղը ...:

Սալօն մը կը դտնուիք, ուր առաջին ան-
գամ ըլլալով հրաւիրուած էք՝ թէյ առնելու:

Ինչ որ կը նշանակէ թէ պատճառներ ու-
նիք չափազանց զգուշութեամբ նստելու,
խօսելու, վարուելու, որպէս զի ձեր ետեւէն
ըսեն.

— Այնի՛նչը, օ՛հ, ի՛նչ սիրուն տղայ ...
Երանի՛ թէ Արինայէնց աղջիկը անոր տայինք...

Եւ անա՛, այս տեսակ փափուկ կացու-
թեան մը մէջ, ակռայի ցաւը իր ներկայու-
թիւնը կը զգայնէ բարակո՛ւկ մը ...

Չանդրադառնալ կը ձեւացնէք և զայն
ճամբելու համար՝ վարվումն խօսակցութեան
մը մէջ կ'իյնաք, յուսալով որ թերեւս ու-
շադրութեան առարկայ չըլլալով՝ կ'ելլէ կ'եր-
թայ:

Բայց ակռայի ցաւը այդ տեսակ փափ-
կանկատութիւններ չի դիտեր:

Տակաւ ցաւը կը սաստկանայ և ձեր
բերնին մէջէն կը սկսի պոռալ.

— Է՛յ, առդին նայէ՛, ես հոս եմ ... ես
մարդուն էիքը հարամ կ'ընեմ ...:

Մեկուսի՛ ոտքերուն կ'իյնանք ակռայի
ցաւին, աղաչելով, պաղատելով որ գթայ,
գոնէ ժա՛մ մը, մինչեւ որ այդ սալօնէն
դուրս ելլէք:

Բայց անգութը չի՛ դիտեր գթալ:

Քիչ մը պաղ ջուր կը բռնէք վրան. — կը
լռէ,

— Շնորհակա՛լ եմ, ակռայի՛ ցաւս, կը
խորհիք, մէռսի՛ ...:

Բայց սպասուհին սուրճ կը բերէ:

Ակռայի ցաւը սուրճը խմելուն պէս՝ ալ
ա՛ւելի կը սաստկանայ:

Տան տիրուհին կը ստիպէ որ խօսիք.

— Ի՛նչ կը մտածէք, պարո՛ն, կը հարցնէ.

— Ակռայի ցա՛ւս, կը մտածէք, բայց չէք
խօսիր.

Քիչ մըն ալ պաղ ջուր կը բռնէք:

Անուշը կը բերեն,

— Հրամայե՛ք ... կ'ըսէ տիկինը:

Ի՛նչպէս մերժել:

Եւ անուշեղէնին վրայ՝ ակռայի ցա՛ւը...

Չպօռալու համար ակռանիդ կը սեղմէք,
մինչ արցունքի կաթիլներ աչքերնէդ կը բըղ-
խին խոշոր խոշոր:

— Ինչո՛ւ չէք խօսիր, վրայ կուտայ տան
տիրուհին:

— Եթէ կարելի է քիչ մը ջուր ... կ'ա-
ղերսէք՝ բան մը ըսած ըլլալու համար:

Ու պաղ ջուրը նորէն կը բռնէք ձեր ցա-
ւող ակռային վրայ:

Ակռայի ցաւը նորէն կը լռէ պահ մը, ա-
ւելի սաստիկ սկսելու համար ...

— Եթէ կարելի է քիչ մը ջուր ... կ'ա-
ղերսէք նորէն:

Եւ երբ կը համոզուիք որ կարելի չէ դի-
մադրել, հրաժեշտնիդ կ'առնէք՝ բռնօրէն
ժպտուն դէմքով մը և փողոց կը նետէք ինք-
զինքնիդ:

Դրան սեմէն դուրս ելլելնո՛ւղ պէս, ձեր
ակռային ցաւը յանկարծ կը փարատի ...

Ինտո՛ր չհայտնել հիմա:

Մինչ սալօնը ձեր ետեւէն սա՛ իրաւացի
խորհրդածութիւնը կ'ընեն.

— Դէ՛շ տղայ չէ, բայց շատ ջուր կը խմէ
կոր ... Բիւբը պարպեց ... սարսկա սալա-
քասի կերած ըլլալու է:

* * *

Աշխարհիս երեսը չէ՛ մնացած բան մը,
զոր ցաւազար ակռաներուս վրայ դրած չըլ-
լամ, անոնց ցաւէն աղատելու համար:

Օխաներով քացախ կըլլած եմ:

Ականջներուս խողովակները վար շինե-
րով զօլօնեա պարպած եմ:

Շապը և ազը ինծի համար ոչինչ են:

Այտերս պղպղէ ամաններ դարձած են:

Պիցիլիներով օղի և դոնեաք բռնած եմ
ակռաներուս վրայ:

Ով կէտնոսներով ջուր թափած եմ վրանին,
ինչե՛ր, ինչե՛ր ...

Եւ ինչ որ ջիղերուս կը դպչի, ակռայի
ցաւերուս առջեւ, մինչ աչքերէս արցունքներ
կը կաթեն չը՛ր՛ չը՛ր՛, կարգ մը «հեռի»ներ
որոնց 32 ակռան տեղն է և ակռայի ցաւին
ի՛նչ ըլլաւ չեն գիտեր, անտարբեր շեշտով
մը կ'ըսեն՝ իբր դարման.

— Տղա՛ս, ֆէլեքի՛ն ետղի՛ ...:

* * *

Աղատելու ճա՛րը:

Իմ կարգիս, պիտի յանձնարարեմ որ մեր
բոլո՛ւր ցաւող թէ չցաւող ակռաները մէկէն
քաշել տալով, կեղծ ակռաներ չինե՛լ տանք
մեր բերաններուն, որով մէ՛յ մըն ալ ակռայի
ցաւին երեսը չպիտի տեսնենք անշուշտ:

(Այս յանձնարարութեանս համար Պ. ա-
տանաբոյժներէն հարիւրին քսան կը պա-
հանջեմ):

Բայց հապա կեղծ ատամնաշարերու ան-
պատեհութիւնները ...:

Ա՛տ ալ ուրիշ օր:

ԿԱՎՈՅ

ՍՏԱՅԱՆՔ

ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՈՒԹՈՐ ՄԱՍՈՒՆՔ
ԲԱՆԻ, հեղինակութիւն՝ Եղիշե Եպիսկոպոս
Դուրեանի, հրատարակութիւն՝ ՊԱԼԵՆՑ գը-
րատան. ինչպէս նաեւ:

ՆՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ, դարձ-
եալ հրատարակութիւն՝ ՊԱԼԵՆՑ գրատան:

Սոյն օգտաշատ գիրքերը ջերմապէս յանձ-
նարարելի են՝ թէ՛ մայրաքաղաքիս և թէ՛
զաւտաններու բոլոր վարժարաններու համար,
առաջինը իբրեւ քերականական կանոններու
գիրքուսոյց մեքոս, իսկ երկրորդը՝ պփռանի և
հրահանգի թրքախօս մանկուոյն:

Կեղրոնատեղի՝ միմիայն ՊԱԼԵՆՑ գրա-
տունը, Կ. Պոլիս Չաղմաղճըլար, թիւ 20:

ԴԱՐԱՍԿՔԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Ձ

Ձարդ. — ... (Տե՛ս կեղծիք):

Ձարմանք. — Տեսակ մը մասնակի ապու-
շութիւն:

Ձգացում. — Բան մը՝ ուրկէ շատ ունե-
ցողը քիչ կապրի, իսկ քիչ ունեցողը շատ:

Ձատիկ. — ՀԱԻԿԻԹՆԵՐՈՒՆ գոյներնին փո-
խած օրը:

Ձուալ. — Կենդանաբանական երաժշտու-
թիւն:

Ձափոս. — Ենովք մարդարէին ամու-
նային տղան:

Ձաւակ. — Առաջները ինչպէս որ մամի-
կըս շատ անգամ կը պատմէր, զեմպիլով և
կեղեցւոյ խորանին ետեւէն կիջնար, իսկ հի-
մա՝ բաղդաւորներուն փողոցին դռնէն կը
կախուի:

Է

Էրիկ. — Տաճկերէն սալոր՝ ճան, միւր-
տիւմ, չախալ այլովքն հանդերձ, իսկ ա-
մուսական ամուլին այր անդամը:

Էս. — Իր այլազան անսակներովը աշ-
խարհիս մէջ ամէնէն շատ գտնուած կենդա-
նին:

Ը

Ընկոյզ. — Եռապատեան համով պտուղ
մը, որ կնոջ սրտին պէս կը հասունայ,
այսինքն նախ կը կանանչնայ, յետոյ կը կոշտը-
նայ ու ապա կը թուլամորթի:

Ընծայ. — Ամէն մարդ ալ կրնայ ընել՝
երբ կը ցնծայ:

Ընցանիք. — Այս բառին նշանակութիւնը
կաղմողներուն հարցուր:

Ընկեր. — Հետը միայն խմէ կեր:

Յ...օրինեց
մեծ քառագիծ
ՌՈՄՍՆՈՍ

ՔՕՆՁԵՌԹՈՍ ՏԱԻ ՃԻՕՎԱՆՕԹԹԻ ՍՔՕԼԱՌԷ

Կիրակի, Բերա՝ Բըթի-Շանի ձմեռնային
թատրոնին մէջ, տեղի ունեցաւ Կեդրոնական
և Էսայեան հակասեռ վարժարաններու

ՊԱՐԳԵԻԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ

հանդէսը, ի ներկայութեան հոծ բազմութեան
մը:

Աշակերտներուն կարողութիւնը ներկայա-
ցուց Մ Ղէոս Մանաս (Մ⁰ մայէսթրոօին կրճատ-
եալը), որ բուռն ծափեր խլեց չի հասկցող
հաճախորդներէն:

Առաջին մրցանակ Պր. Այնինչ Այնինչ-
եան ...

Շա՛բ, շա՛բ, շա՛բ, շա՛բ ... (ծափեր):

Բ. մրցանակ Պր. Այնինչ Այնինչեան ...

Շա՛բ, շա՛բ, շա՛բ, շա՛բ ... (ծափեր):

Ա. մրցանակ Օր. Էմմ գիտեր ինչ՝ Էմմ
գիտեր ինչեան ...

Շա՛բ, շա՛բ, շա՛բ, շա՛բ ...

Բ. մրցանակ Տիկին Ֆիլան Ֆալանեան ...
(այս տարուան շրջանաւարտներուն մէջ տի-
կին ալ կայ եղեր : : :):

Շա՛բ, շա՛բ, շա՛բ, շա՛բ ...:

Քէօռը երգեց կտոր մը, որ փոխանակ
դպրոցական ըլլալու, որովհետեւ աշակերտ-
ներէն չատերը Վէնիսի և Բագոսիններն էին
մեծ մասամբ, սիրահարական էր. Sous ta
fenêtre, եւայլն:

Յետոյ մեներգ մը:

Կրկին մրցանակաց բաշխում:

Դաշնակ՝ դպրոցական աղջիկներու կողմէ,
(ինչ որ է՛ն լաւն էր սակայն):

Քէօռ:

Օրիորդներու խմբերգ:

Շրջանաւարտներու երգ:

Մրցանակաբաշխութիւն:

Ծափ:

Էօֆ, Բիւֆ, տաք, քրտինք, ճըլը պըլը,
հիօ պիյօ, կեղծ շնորհաւորութիւններ, և
բըբը ...:

* * *

Ժամը ցերեկուան վեցուկէն է: Գեհէնի
տաք մը երկինքն ի վար կը մաղուի կար-
ծես, ու Բերայի շիտակը մինչեւ Բըթի-Շան,
կառքերու և ոտքով քայլողներու նշանակելի
բազմութիւն մը կերեւայ: Անապարանք մը,
բան մը կայ կարծես ամէնուն ալ գնացքին
մէջ, վիզերը ցից, նայուածքները ծանր, ...
մինչեւ իսկ կառքի ձիերը տարբեր ետեւ մը
կընթանան մինչեւ հոն՝ ուր նուազահանդէսը
տեղի կունենայ:

Բանն յաջող է անոր՝ որ պատճառ եղաւ
այս եղանակին հետաձգելու concertը, քանի
որ կիներ և օրիորդներ կրցան իրենց չիչի
պուռնուցաւ ամառնային նոր թուալէթնին
exposer ընել, պոյնիկ գլխարկներէն մինչեւ
դժաւոր պոսթուռներնին, որ այս ամբան է՛ն
վերջին նորաձեւութիւնն է:

Ձեր ծառան՝ որ թարգմանի այս սողերը
գրողը, գլանիկ ի բերան կը յառաջանամ
Բըթի-Շան և առաջին պատրանքս կըլլայ
ինքզինքս Պատրիարքարան կարծելս ... ,
բառլախ կոնակը բարապանին ի տես, որ
տոմսակս ձեռքէս կը քաշէ այնպիսի ձեւով
մը՝ որ անպատճառ մտքէն անցուց սա խօս-
քը՝ « տարին տասերկու ամիս աշխատէ, առա-
սըրայ ալ անկարեայ ... անցիր ... »:

Իրանը մէջօքը՝ ես ըսեմ դուն համրէ,
չարուած են բոլորն ալ Հանդէսը կազմակեր-
պողներէն անոնք՝ որոնց յանձնուած էր ան-
շուշտ ներքին discipline:

Երանի ինծի որ չատերու ծանօթ եմ, այս
բանը առաւելութիւններ ունի, որուն՝ $4\frac{1}{2}$
Ժամ ոտքի վրայ մնացողները միայն կրնան
վկայել, անմիջապէս garçons d'honneursները,
honorablement զիս կառաջնորդեն ներս և կը
տանին տիտիկ ընել տալ բաց-խրիկ թիկնա-
թոռի մը վրայ, ուր կը շնթռկիմ, պարզ
remerciementով մը, բան մը՝ որուն չատերը
ոսկի տային չպիտի կրնային յաջողիլ:

Սրահը կիսով չափ լեցուն է արդէն այն
իւրաքանչիւր փութկոտներով, որոնք տեղ բռն-
նելու համար, գրպանին կալէթաներով վե-

կած և թերեւս ցերեկուան ճաշը հող ըրած էին: Օթեակները՝ է՛հ ... այն պահուն հող թաղմելիքները ո՛ր գիտէ քիւլպաստի ոսկոր կը կրծէին կոր դեռ:

Բոլոր նստողները, կիկլոպներու պէս, աչքերնին կռնակնին փակցուցած նոր մտնողները գիտելով կանցնէին, և վայ այն ընտանիքին որ սրահէն ներս կը մտնար, ահա հարեւաւոր աչքերու զննութիւնը և քննադատութիւնը վրանին կը թառէր, մտնողին վերը վարը վերջապէս ամբողջութիւնը քոթիթիք կըլլուէր մինչեւ այն ատեն՝ երբ տեղաւորուելով՝ ուրիշներ մուտք կը գործէին պատկառելի սրահէն ներս:

Ամէն տարի՝ զաւեշտի մուսաս, բաներ մը կը բերէր աչքիս ու ականջիս տակ, բայց այս տարի ներուի թող ըսել թէ՝ պիթիթի գեմահաթը:

Կիրակի հող գտնուողները միայն բեմի վրայ զարնուածներուն և երգուածներուն ունկնդիր եղան, բայց ես, օգտուեցայ նաեւ այն միւղիք նաթիւռէլէն՝ որ ճիշդ քովս նստող մը նէվազիլէն թըխըմիշ եղած քիթովը կը զարնէր:

Եւ այն ինչ վարագոյրը պիտի բացուէր, յանկարծ կարաւան մը ներս մտաւ, մէկու մը առաջնորդութեամբ որ իր ետեւէն կը քաշէր Ութի հոգի, և որոնք եկան շարուիլ ամբողջ կարգի մը վրայ, գրաւելով Ութի թիկնաթոռներ, որոնց համար հաւատքիս պէս գիտեմ թէ՝ ութը փարայ վճարած չէր:

Ժողովուրդը տակաւ կը խռնուի, մասնաւոր աթոռներ օդին մէջէն դաւալգլոր կը հասնին, քիչ կուգան, կրկին կը բերուին և դարձեալ մարդ-պարտէղ մը կուգայ կը յօրինուի մեր առջեւ:

Կառսօն s'օնեօնները կծիկը դրած են ալ, մինչ յոգնութենէ ծունգերնին թողացող տիկիններ և օրիորդներ ի գուր կսպասեն, որպէս զի թիւնէլի մարդասիրական և քաղաքավարական սիսթէմը հող ալ կրկնուի, այսինքն էրիկ մարդիկ տեղ տան իրենց, բայց աֆթո՞ւ բիօ՞ւ ... մէկը հակաբորը չի խախտէր, հակառակ բիրէի կճուկներուն ուրոնք կը վխտային թաւիշներուն մէջ:

— Առջիս գոցեցին, կըսէ կին մը, մուսըլին թաշկինակովը ճիտն ի վար կաթկթող քրտինքը սրբելով:

— Էյ ճանճժ, աս քաշուելու բան չէ, կը յարէ ուրիշ մը կռնակի թալեօ սէյիր ընելէն ուրիշ բանի համար եկած չպիտի ըլլանք ...

— Կայնէ նայիմ, ես հիմա կը պէճէրէմ ըսելով՝ վարա կէլա միւսիւ մը կը կանչէ, քուզում միւսիւս, խապիլը կայ նէ առջիս պանայիր ... հիշ չեմ տեսնար կոր ...

— Ինչ ընեմ տիկին, կարելի բան չէ, բաղմութիւնը մէկ կողմէն կը խռնուի կոր ...

— Էյ աղե՛կ եա, տեղերնուդ կէօրէ պիլէթ ծախէիք եավրուս, խօսք կառնէ տիկինը, որուն մազերէն ջուրեր կը վազէին:

— Այդ իմ գիտնալիք բանս չէ, բառսօն, բառ իսի մատամ, ըսելով կը մեկնի մօտէն ուրիշ ծանօթուհի մը առաջնորդելու համար:

— Տեսար սա բիճքօին ըրածը, ծըմն է ինչ է, գալուն կիպի ծուռ լեզու ծուռ լեզու առաւ շնթուկեցուց, ասոնց ծառքը ինչ կը պէքէյէս քի ըլլայ ...

— Սո՛ւս կամաց ըսէ, Հանրագիտական Լիլան կիմանայ կոր, կըսէ քովը նստող կին մը, որ զիս կը ճանչնայ եղբր ...

— Գրէ՛ քա եավրուս, գրէ՛ քի ասոնց հասկցունեմ ալան քէնտիւնէ խօզ խաղալին, եանի չի գրելու ըլլաս նէ՝ մենք պօյն կիւճէնմիշ կըլլամ ... կըսէ տիկինը իմ կողմս դառնալով, մինչ միւս կողմէ ճանչցուիլս բռնաւ գործիս չիգար:

Քիչ մը անդին Կեսարացի մը բարձր ձայնով կը խօսի երիտասարդի մը հետ:

— Ղէօղիւնիւն ճալտաղընը սէվտիւկիւմ, պիր լիւա վէրտիւք իսէ պիր մաթպալա իսկէրմիսի օլսուն վէրինիզ պէ դարտա՛շ ...

— Հրամանեցէք հիմա, շշշշշ ... աթոռ հո՛ւս ... այս կողմէն, ըսելով իրար կանցնին, մինչ ուրիշ մը՝ բերուած աթոռ ծանօթ տիկնոջ մը կուտայ ...

— Թէյզէնին զըզը՝ մի իտի եօխսա տալընըն թօնո՞ւ մու, մանտամաեա նասը՛լ ղէօթիւրտիւն տէ, պէնի զաղըլս կիպի ալախսա տուրտութառուեօն ...

— Ներեցէք հիմա, ձեզ ալ կը գոհացնենք ... հիմա, աթոռ, հո՛ւս, այս տեղ, այս կողմէն ...

— Տէ կէթ, սահի մէքթէպ իշի իմի՛շ ա ... ղիտէյիմ Պէլլա-վիսթատա պիր հասըր սէրտիբէիմ ... այսիւ դաբլարըմը մը չըլտար-

Թայլմ պիրտէ նառկիլէ ... օ՛խ ... դօն-
սառտա սիզին օլսուն մօնսառտա, կըսէ ու
հովանոցը թեւին տակ դուրս կելլայ սրահէն:

Ամէն ոք տեղաւորուած է հիմա, նստող-
ներու չափ ալ ոտքի վրայ մնացողներ կան,
որոնք կռահելով թէ, կամ կենալու կամ ել-
լալու է, կորոշեն կայնիլ, յիշելով դպրոցա-
կան տղայ տարիքնուն պատիժը ... դպրո-
ցական հանդէսի մը մէջ:

Վարագոյրը կը բացուի, կեդրոնականի
տղաքը կը շարուին և հետզհետէ բոսփո-
ւին թիւերը իրարու կը յաջորդեն:

— Տա նէֆէսիդ ծանը կտրէ նայիմ, սա
աղջիկը ինչ կըսէ կոր ... կըսէ տիկին մը
իբէկ պէօճէյի պէս վիզը երկնցնելով և ա-
կանջ տալով:

— Իշտէ բոլիմօ ծան ունի տէյի կապէթան
գրեր էր, չի կարդացիր կը պատասխանէ քո-
վինը, ան է ...

— Վա'խ, վա'խ, վա'խ, կիտէս քի եա-
թախէն հանէր չարաֆը պլէր բերեր են ...
էյ մեղայ քի ասանկ մարած ծան մը լսած
ունէի ...

— Իշտէ խոյախ է կըսէին կոր նէ աս է ...

— Քա թոռանս կամիթ մը զարնեմ նէ
ասկէ էվէլ կելլայ ծանը ... աչկն ալ օռ-
թան թէրս կայնողին վրայ է, ան ալ ըսես
նէ կէճէ խուշիլի պէս սիմսիեան հագներ է,
կերերայ ու կերերայ կոր ...

— Մայրիկ սուա եղիր, ետեւէն դիտո-
ղութիւն կընեն կոր, չենք լսեր կոր տէյի ...

— Իմանալ կուզեն նէ թող երթան ճէպը
մանան քի իստակ իմանան ..., զաթը իմ
սիրտս լեցուն է, ատանկ սիրտ կոտորուք-
ներու չեմ իգար, ան գիտեմ քի ճիշէրները
կը բղքտէ կոր մասուրայ մը էվէլ ծան հանէ
տէյի, անդին ըսես նէ, պիր տիւզ խալա-
պալընը բաթըռտըի կուտան կոր քէմաննե-
րով ...

— Պէրէքեաթ անոնց քի ծան մը կելլայ
կոր ...

Ուրիշ անկիւն մը:

— Ոտքերնիդ պազնեմ աս տարուան բը-
ռօկուամը ո՛վ չիներ է ... կը հարցնէ կին մը
թր մօտը նստող քավալիէին, որ պիտեմը
չաւրուելու համար կուռքի մը պէս անխօս
նստած էր:

— Ը... մ'... մ'... մ'...

— Ինչ կըլլաս կոր ճանրմ, բան մըն ալ
հարցունեմ տէ պատասխան տուր ...

— Աս ամէն անգամ ասանկ տեղ մը գա-
լուդ պէօհիւղիւր կընէս, ո՛ր խառնախախ-
չըներ է նէ չըներ է, աղեկ քի տեսար, եր-
կու սահաթ այնային դէմը պըյըններս տիք-
կենան տէյի քաշածս ... հիմա պէտք է քի
բերանս բանալ տաս ...

— Էյ աման աս ալ չէի լսեր, ամէն մարդ
պըյըն ունի ամա չի պապանծիր ...

— Իշտէ օռթան կեցողին համար ըսին
քի ան օսկանիզէ է ըրեր տէյի ...

— Դպրոցի երգի միւսիւն չէ' ...

— Հա' ... տահա բան պիրտի հարցունեմ ...

— Ան է քի ... պիր տիւզ տղաքը օռ-
թան կը բերէ կոր ...

Անկիւն մըն ալ:

— Խերը տեսնաս, բարեպտուղ ղաւակ
ըլլայ, տառոսը օրթանճայիդ ...

— Շնորհակալ եմ ամա ինչ կայ, ինչ
եղաւ քի ...

— Տղադ աս խուժբին մէջն է եղեր ...
իշալլահ ասանկ ամէն պարգեւաբախտութեան
պիրինճի կելլայ ...

— Քա աչկդ խողայ, աս պարգեւաբաշ-
խութիւն չէ, քօնսէ՛ռ կըսեն կոր ինչ կըսեն
կոր ...

— Չէ' ... ես ատոր չէշիտը տեսեր եմ,
քօնսէ՛ռ ըսածդ մուղիքայով կըլլայ, աս բիւ-
թիւն դպրատունի չօճօխներով է ... զահէր
ատիտաբը չիյտեմ ...

— Հա' ամա, աս տարի ճայնաւոր միւ-
սիւն թէսլիմ են ըրեր, ան ալ գիտցածէն
դուրս ֆալցօ մը չընէ տէյի, դպրատունի եր-
գեր դրեր է սըրավարտի ...

— Ան պաշխա, անոր համար է քի պիր
տիւզ չօլուի չօճօխները առջի կը քէէ կոր ...

Լօթի մը մէջ:

— Անհանգիստ կըլլա՞ք կոր աիկին ... կը
հարցնէ այցելու մը, որուն վրայէն քի մի
քուիքի հոտ կուգար:

— Շիտակը՝ պիրտ ըսեմ, գիտնայի նէ
չէի իգար, աս տաքուն աս բազմութեան մէջ
նստիլ և դպրոցական հանդէս մը դիտելը ա-
մէն լան սիրտի գործը չէ կարծեմ ... հա',
հա', հա' ... (տիկինը կը խնդայ և ձեռքի

բռնակալով՝ որ բաւական հասակեկ էր, կը փչուի):

— Իրաւունք ունիք տիկին, բռնակալը շատ տղայական է, բայց ինչ ընենք, մայիսթոն ախպէս որոշեց ...

— Մայիսթոն ո՛վ է, նավային համար ես ... չի տեսա՞յ նէ ...

— Ո՛չ, Մանասը, աշակերտներու երգի դասատուն ...

— Հա՛ ... այդ պարագային աւելին չէր սպասուէր ...

Ուրիշ օթեակ մը:

— Աճապ սրկէ դուրս կրնանք ելլար, կըսէ տիկին մը որ Շրիկէլէն հագուած էր:

— Ամօթ է ճանրմ, տեսնողները ինչ կըսեն ... կը պատասխանէ քաւալիէն:

— Աղէկ ամա քունս կուգայ կոր, պիտի յօրանջեմ, կը խաչնիմ կոր ...

— Այգքանի ... չօգ չէ՞յ ...

— Իրիկուն եղաւ դեռ չնորհքով նիւմէնօ մը մտիկ չըրինք ...

— Սթանօն գէ՛շ էր ...

— Էհ իշտէ ատ, ուրի՛շ ...

— Էքսերճեանները ...

— Մէյ մըն ալ ատոնք ... լմնցաւ, ուրի՛շ ...

— Խմբերգները ...

— Ամա՛ն ... դպրոցներու մէջ այնչափ մտիկ եմ ըրեր քի ... աս տաքուն ալ աս պարլիկ տեղը երգ մտիկ չըլուէր չիտակը ...

Ներօր, գուլիսներուն ետին:

Քօնսէնճիներէն աւելի անոնց բարեկամները, բարեկամներու բարեկամները և անոնց ալ ծանօթները, ծանօթներու ծանօթները, և ին. և ին. և ին. եկած խոնուած են գուլիսներու ետին, և բացառաբար հարիւրնոց սիւկառները Ռեհիլէ Բառօլի ծխնելոյզին պէս բերաններէ դուրս կուգան:

— Նէ՛ եաքաճաղըզ մայիսթոն, կը հարցընեն մէկքանիներ, ոտքերնին թոթուելով, որպէս զի բանթալօնին չիտակ կենայ:

— Է՛, Սէ՛ն Սանս, Սէ՛ն Սանս ... կըսէ Մայիսթոն ձեռքը ճակտին տանելով և պապէթովը բաշաններուն փոշին վար տալով:

— Օնը Պէրպէրեանըն քօնսէնիտէ պիտեքէրէ սէօլէտիք, կէնէ՛ մի օնը սէօլէյէճէ-միզ ...

— Է՛ ... նէ՛ եաքայըմ ... օ վա՛ր ... պաշկայ ...

— Ահալիտէն ուրմառք էտիյօրլար ըմըշ ... մայիսթոն ...

— Ժը մա՛ն ֆ ... , հայտէ՛ հայտէ՛ , սէս-էր սաղլամ ...

— Օ՛ ... պայըր թուռնու կիպի ...

— Պօ՛ն, հայտէ չօճուգլար (բարձրադոյն կարգը առաջ անցնի ...):

— Պօն ժուռ միւսիւ Սինանեան ... հիչ սէսին չըգմայօր պու կիւն ...

— Պէն Պիղատոս օլտոււմ ... Էլլէրիմի երգատըմ չըգտըմ ...

— Գառտաշ սէնտէ պիր բիանօ սօլօ եա-բայըտըն խըյանէ՛թ ... Է՛հ ...

— Պիզ թանըմըզ օղլոււմ, թանըմա-յանլար իլէրի կէչսին պագալըմ ...

— Ծօ՛ Ակայեան ... նասըլ ես, բոօվա ըրի՛ր ... Ծօ՛ չեկլաւս ...

— Հայտէ ծօ զէլզէկ, նէ տիր քի, նէ օլաճազ, պիտիլիմի սէօլէյէճէյիմ ...

— Հէրքէս սանա պէքլէյօր, ես հիմա ժողովուրդին մէջն էի, Ակայեանը ելլար տէ մտիկ ընէինք տէյօրլար ...

— Ծօ՛, չըգար չըգմազ տէրէ պօյու տիւզ կիտէր տէյի պաշլայըմ մը ...

— Ամօթ է պէ՛ ...

— Միւսիւ Ակայեան ձեր թուուն է, կը պօռայ մէկը:

Եւ Ակայեան էֆէնտի կէս խմուկ սիկառը գետին ձգելով՝ վրան կոխելու ալ չի մոռնար, և երկու անգամ հազալէն վերջ բեմ կեկլայ ...:

Անկէ անդին գիտէք:

* * *

Մինչ այս մինչ այն բռնակալին ետմախը կը քակուի ու վարպետն ու եամախը կը ցրուին և քրտինքներու մէջ ժողովուրդը կը մեկնի սրահէն ... ամէն ծնողք իր յառտ-ջաղէմ զաւակը քովն առած՝ չորս դիէն լսե-ով ջերմ չնորհաւորութիւններ և մաղթանք-ներ, յաջորդ տարեջրմանին՝ ալ աւելի յաջող հանդէսներու մասնակցելու համար:

Օ՛հ ... ԱՇԽԱՐՀՔ ԿԱՅ ԵՂԵՐ ...:

Ահա բացաքանչուլութիւնը որ ամենուն բեր-նէն թռաւ, երբ ամէն ոք ինքզինքը պար-տէզին մէջ գտաւ:

Եւ որովհետեւ ատենը շատ ուշ էր, հանդիսականներու մէկ մասը սկսաւ բէռաթի ընել Բըթի-Շանի պարտէզին շուրջ, կարծիքներ փոխանակելով քօնսէսին վրայ, և սա եզրակացութեան յանդած մեկնեցան բոլորն ալ թէ՛ տեղի ունեցածը քօնսէս չէր, այլ՝ դպրոցական տղայոց հանդէս մը՝

«Фогнепо саші ґіоуаґоґррі ґоуаґоґ» :

ԻՆՉՈՒ

Ինչպէս ամէն բարենպաստակ ձեռնարկներու՝ նոյնպէս Հիւանդանոցի հարկւրաւոր պատըսպարեալներուն ի նպաստ սարքուած այս նուագահանդէսը ալ աւելի փայլուն և արդիւնաւոր ըլլալուն նախանձախնդիր, մենք ալ մեր կարգին կը հարցնենք.

Ինչո՞ւ բոսկումսին պատրաստութեանը պէս է՛ն փափուկ մասը անխորձ երգամարդի մը թողուած էր :

Ինչո՞ւ՝ փոխանակ Բըթի-Շանի Աճաի քեարը չի տրուէր հանդէսը, աւելի ընդարձակ, աւելի օդաւէտ, և ուր է՛ն Հայ-լայֆը սիրով սիրտի գար գրաւել թիկնաթոռները, և գրեթէ ոտքի վրայ մնացողներ չպիտի ըլլար, և արդէն չէ՛ մի որ օթեակներու համար մասնաւոր տոմսակ չի դար, և թէ երեք տոմսակ մէկտեղ բերողը իրաւասութիւն ունէր օթեակ մը գրաւելու : Բացառութիւնները յարգելով :

Ինչո՞ւ՝ Օր. Մինասեանի օտկը աւելի ԲԲ՝ ռեզանքապլ տեղ մը չէին դրած, և թէ շատեր չի կրցան հասնալ թէ՛ իրօք տաղանդաւոր Օրիֆորդն էր դարձողը :

Ինչո՞ւ՝ երբ ահագին երկսեռ բաղմութիւն մը ոտքի վրայ մնալովը հանդերձ՝ կառսօց s'օցկօնները փոխանակ աթոռ հայթայթելու՝ օթեակներու մէջ, հա հա հի հի կընէին անտարբեր :

Ինչո՞ւ՝ Մինասեան Բուսթօնին մասնաւոր նիւմէսօ մը յատկացուած չըլլար, ինչ որ սիրով պիտի ծափահարուէր :

Ինչո՞ւ՝ Օր. Մոլտովազ չի մասնակցեցաւ նուագահանդէսին, այն որ այնքան ընդունելութիւն գտաւ ասկէ երեք տարի առաջ, և հիմա ո՛վ դիտէ որչափ յառաջացած էր :

Ինչո՞ւ՝ Պր. Պօչնաքեան սօլօ մը չ'երգեց,

այն որ խոստմնալից և ծափերու արժանի ամաթէօն մըն էր :

Ինչո՞ւ՝ քօնսէսին է՛ն տաք միջոցին դուրսը օտքա օյիծիի պէս արուսդ տըռուդ դաւաթներ իրար զարնելով ջուր կը ծախէին :

Ինչո՞ւ՝ և սակայն տեղ չունինք և չենք կրնար շարունակել :

Pour le tout, շնորհակալութիւն աղնիւ բարեբարներուն, և շնորհակալութիւն ամէն անոնց՝ որոնք 900 ոսկիի կորիկ գումար մը տարին յանձնել Հիւանդանոցին սնտուկը :

ԼԻԼԱ

ՊՁՏԻԿ ԳՐՈՒԱԳՆԵՐ

Հաստիկէ վիզով և մեծափոր քահանաներէն մէկը եկեղեցիին մէջ իրենց յատուկ սինակը կը շրջագայեցնէ, յետոյ վերնատունը կեղւայ, հոն ալ պտըտցնելէ վերջ՝ ինչպէս կըլլայ ոտքը դառնալով 20-22 հաստ սանդուխներէն վար կը գլտորի, անմիջապէս քանի մը անձեր քովը կը վազեն և տէրաւորը կը վերջնէն ղգայադիրկ վիճակի մէջ : Քահանան որուն ամբողջ մարմինը շատ գէշ կերպով ցնցուած էր, հազիւ թէ կսթափի, առանց նկատի առնելու իր ցաւերը՝ ամբողջ ձայնովը կը պոռայ.

— Փարանքը, փարանքը, թապախին մէջի փարանքը :

* * *

Աչօռերու վարժարանէն թերաւարտ օրիֆորդի մը աղջիկտես կուգան : Միջնորդ կինը շատ գովելով սոյն աղջիկը. «Ճուրբու պէս փրանսրդճա կիտէ, հայեւաբը հաթիմ պիթիմ ըրած է» ըսած էր :

Երիտասարդը՝ աղջիկը խօսեցնելու մտք նիւթ մը կառնէ.

— Հնաւանդ սովորութիւն մըն է որ, աղջիկները մինչեւ իրենց ամուսնութիւնը, նոյն իսկ անկէց բաւական ատեն ալ ետք, չեն խօսիր լուռ ու մունջ կը մնան, չիտակը ես անոր հակառակ եմ, կը փափաքիմ որ ինչպէս երիտասարդները, նոյնպէս ալ աղջիկները ո՛ր եւ է գազափարի մը շուրջ իրենց կարծիքները յայտնելու աղաւթ ըլլան, դուք ի՛նչ կը խորհիք այս մասին, օրիֆորդ, խնդրեմ համարձակ խօսեցէք :

— Ինչ խօրթիմ — կը պատասխանէ սէօռերու վարժարանին աշակերտող օրիֆորդը — հաւային կը նայիմ կոր քիմ սաֆի պուլուիթ խաբլանմիշ եղաւ, կալիպա սաղանախ մը պիտի պաշլայէ :

ԻՍԳԵՆՏԵՐ

ԱՆՔՐՏՈՒԿՆԵՐ

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒԻ

ՌԵՍԹԵԳ ՆԵՐԱ

Բ.

Անցեալ շաբթուան համալուար Տառնին խնդիրը ձգելէ ետքը՝ սա՛ սեղանին մօտեանք, ուր մէկը բաներ մը կընէ ու քովը գտնուողները՝ ականջնին անոր բերնին տընկած՝ կը ճաթին խնդալէ:

ԱՆԹԻՓԱ

Պ. ԳԱՐՆԻՒՆԸ

Երկայնահասակ, քիչ մը կարմիր երեսով ու մութ դեղին պեխերով, զուարճա-

խօս մարդ մըն է ա՛ն՝ Պարոն Գարեգինը, ապկեցուցիչ տաղանդի մը տէր ըլլալով հանդերձ լեզուագէտ մը, որ ջուրի պէս կը խօսի Յունարէնը, Գերմաներէնը ու Ֆրանսէրէնը:

Չայն կապկելու մէջ վարպետ մըն է. հարգատ նմանութեամբ ձայները կը հանէ՝ թէ մեր, թէ Յունաց եւ թէ Լատինացուոց եկեղեցականներուն:

Անցածները մեր խնդրանքին վրայ, կըրցաւ խիստ նմանութիւնով արտադրել... կողորդէն, բաւական մը քարոզիչներու Աւետարան կարդալու եղանակին ու քարոզ տալերին՝ իրենց յատուկ շարժումներովը:

Գօնիաի Մէթրուպօլիտին ձայնը հանած ատեն, մեր մօտը նստած Յոյն մը, որ թերթ կը կարդար, յանկարծ գլուխը դարձուց ու ճիշդ մէթրուպօլիտին ձայնին նմանիւր հաստատեց ու շնորհաւորեց Պ. Գարեգինը:

Մէհտէրին՝ Համբարձին սկսիլը իմացած էք, եթէ չէ՛ք իմացած Պ. Գարեգինը գացէք գտէք, ու լսած կըլլաք՝ այնքան բնական կընէ որ, բան մը, որ Մէհտէրին սաները լսած ու ըսած են.

— Այո ճիշդ մեր երաժշտապետին ձայնն է:

Աս ամբողջ ձայները մէկ երկու անգամ մօտիկ ընելէ ետքը կառնէ եղեր, իբր թէ... Ֆօնօկրաֆի բլաֆներ զետեղուած ըլլաւ... զանկին մէջը:

Հիմա մերաք է ըրած Գրգ. վրդ. Ս. Կառնեանի ձայնը առնել. թող ի՛նք խօսի.

— Իշ քի Գէորդ Վարդապետին սէսինի ալայըմ, զաթը պիրազընը ալտըմ...

Իր այս յատկութիւնովը երեկոյթներու մէջ Ֆիւրհօր կընէ:

Վարպետ սափրիչ մըն ալ է ա՛ն, ու կը յանձնարարեմ ձեզ որ երեսնիդ ձեռքը յանձնէք, եթէ կուզէք որ միեւնոյն ատեն թէ՛ խնդալ եւ թէ... ամիլուիլ:

* * *

ՖՈՒԹ ՊՕԼ

Սա սեղանին շուրջը կը բոլորուին Գում-Գարուի ֆուտբոլ-

ի խումբը, ամէնքը առողջ ու աշխոյժ տըղաք, եւ որոնց խօսակցութիւնն է միշտ.

— Կօ՛ւ, կօ՛ւ, կօ՛ւ:

* * *

ՄԵՀՏԵՐԵԱՆՔ

Իսկ սա սեղանին քովը կը բազմին Մէհթէրեան խումբին ներ-

կայացուցիչները: Երեք չորս հոգի են անոնք եւ երեք չորս հոգի ըլլալուն համար է որ բաւական... գլուխ կարդուկին կոր:

Ասոնց խօսակցութիւններէն քանի մը նըմոյշ դնենք հոսա:

— Թերթերը մեր եռաձայնը գովեր են.

— Չգովեն տէ ի՛նչ պիտի ընեն, քանի որ մե՛ր եռաձայնը եռաձայն է.

— Ախպար, հէմ մերինը եկմայեան է.

— Եկմալեան ըլլալէ աւելի Մէհտէրեան է.

— Ան ի՛նչ պիշիմ «Փառք քեզ Տէր» է աղբար անոնցինը. Օ՛0՛0՛0՛0՛0...

— Ճաննմ, ինչուդ պէտք, մե՛ր եռաձայնը խըյախ է:

— Հապա՛ օռկերնիս...

— մե՛ր օռկը, մեր օռկը, մեր օռկը...

— Այո՛ օռկերնիս...

— Հապա թէնօռնիս...

— Մեր օռկը...

— Մե՛ր օռկը, որ առջեւի ոտքերովը ուղած ատենը կը քալէ...

— Մեր օռկը Դալաթեայինն ալ պատարըմիշ ըրաւ...

— Մերինն քովը Սանթա-Մարիաի օռկին ձայնը կը մարի...

Զիլինկիրեանն ալ իր ներկայացուցիչը ունի հոն, ու տեսնելու արժանի է թէ՛ ինչ-

պէս մէկ Ձիւնկիրեան մը երեք չորս Մէհ-տէրեանի կուրծք կուտայ:

Անցնի՛նք, բացառութիւններ մատնանը-չելէ յետոյ...

* * *

ՈՂՋԵՐԻՔ

Երեք հողի անկիւն
մը քաշուած՝ քառթ-
բօսթալներ կը դի-
տեն: Քառթերը ա-
նոնցմէ են, որոնք կի-

սամերկ կիներ կը ներկայացնեն՝ պատշաճու-թեան սահմանին մէջ սակայն: Աս քարթերը մէկու մը ձեռք կանցնին, որ անգամ մը աչ-քովը զննելէ ետքը, ակնարկ մը կը նետէ քարթերուն տիրոջը ու կը յարէ պաղարիւ-նութեամբ մը.

— Ասոնց ողջերն ալ կա՛ն...

Աս հարցումին անխուսափելի պատաս-խանը ով որ ալ ըլլար սիրտի չուշացնէր, ինչ պէս որ չուշացուց քարթերուն տէրը:

(Հոս ես, չարածճիին մենծը...):

* * *

ԱՅԼԵԻԱՅԼԻՔ

Նա՛ տեղը քանի մը
ծերուկներ, որոնք,
Տէրոջը վրայ խօսելէ

աւելի՛ ուտելիքի վրայ կը խօսին: Հուսա-կեղբորնականէն ելած եւ նոր յաճախող տը-ղաք: Հո՛ն, քառթերաւոր պարոն մը՝ գրպա-նին մէջը ոտանաւորով մը: Սա՛ տեղը պա-րոն մը որ ինքզինքը Տէրոջը նուիրած է...: Սա մեծ սեղանին մօտիկը նստողը՝ Պ. ԲՈՑ-Ֆէսօրն է — այսպէս կը կոչեն զինքը եւ որ տաշտին խնդիրը յարուցանողն է եւ կամ «Տաշտայոյղ»ը, որ Անգլիերէնը բաւական մը ինքնօգնութեամբ սորված է ու հիմակ ալ... Ճարոններէն սորվելու հավէտը ունի...:

* * *

Ահա Գուռ-գարուի Ռէսթը գրեթէ հա-մառօտուած. իրաւ թէ այս սլքտումներուս մէջ բաւական մոռցուածներ եղան, բայց ինչպէս կրնամ մոռնալ՝ հոն տեղը տիրող...աղմուկը ու գոռում գոռումը:

Անմեռուկ



ՍԻՐԱՅԱԼ ՄԻՒՍԻԻՆ

ԲԱՄԿՕՐԷՆ



Քա գուզում Զարուկ, մեղքցիւր ինձի,
Սիրելիս պերի ա՛խ ի՛նչ քառքի,
Հաւատա խօսքիս իրաւ կրսեմ որ,
Ես քու սեվայեթ ալ կը մեռնիմ կոր:

Բանաստեղծ չեմ ես, այլ աղւոր՝ աւերիս
Ես կ'ըլլամ քեզի, ձեռքերս ալ խաւերիս,
Ղուրպանդ ըլլամ, հաւատա խաչո՛ր
Ես քու սեվայեթ ալ կը մեռնիմ կոր:

Գիշերը մինչ լուս, կը մնամ արթուն,
Կը ցաւի վրաս մեր տունի կասուն,
Մըռլան ու մըռլան կուլայ ամեն օր,
Ես քու սեվայեթ ալ կը մեռնիմ կոր:

Յորեկն անօրի կը մնամ խուրս,
Յաւ մ'ալ կը մնայ սա քովի կուրս
Մայիսը չ'հաներ կ'ըսեն կոր բոլոր,
Ես քու սեվայեթ ալ կը մեռնիմ կոր:

Պօյըդ ու պօյըդ քանի կը տեսնամ
Խեղքիս պսուկէն կը պակսի վիրամ,
Խեղքեման պիտի, վստահ չեմ ասոր,
Բայց քու սեվայեթ ալ կը մեռնիմ կոր:

Փալ նետել տուի, Փալնի կրնիկին,
Կը մրկիս կոր դուն քսաւ լալագին,
Քարերը պիտի կը գուրցեն այսօր,
Թէ քու սեվայեթ ալ կը մեռնիմ կոր:

Դո՛ւն մի գիտնար որ ես կ'ըլլամ գոգոզ
Ոչ ալ կ'ըլմանիմ խաւախոնոնոզ,
Շիք մը կը հագուիմ սանկ գոգոր գոգոր,
Ես քու սեվայեթ ալ կը մեռնիմ կոր:

Բան մ'ըսեմ քեզի, վերը Աստուած կայ
Միտքդ բեր մեյմը վերջըդ մեմայ,
Կ'աղաչեմ քեզի ալ մի նայիւ խոռ,
Ես քու սեվայեթ ալ կը մեռնիմ կոր:

ՍՏԵՓԱՆ ԽԱՉՈՒՆԻ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԵՐԱ. — Անցեալ կիրակի ամբողջ Բերայի ժողովուրդը գեղեցիկ գաղափարը յղացաւ՝ փոխանակ հեռուները երթալով ծախքերու մասնաւելու, Բըքի-Շանի շուրջը սլըքալով զթօսելու ամէն անոնցմով՝ որոնք ֆօնսեռի թուալէթ ընենք ըսելով մէկ մէկ քառի քառիւ զարձած էին:

ՆՈՅՆ. — Ստոյգ աղբիւրէ մեղ կը տեղեկացնեն թէ՛ ամբողջ ֆօնսեռին տեւողութեանը Մաքսրո Մանաս երկու անգամ չամառի փոխեր է, և թէ իր աշակերտները չի մսեցնելու համար պուռնուզը փաթթեր անանկ տարեր են: (Մի զարմանաք, Սառա Պէռնառին ալ կառքը չի քաշեցին. Ծ. Խ.):

ՍԿԻՒՏԱՐ. — Իճատիէի մանկապարտէզը ըստ Ֆրէսլէիւան դրութեան՝ սլգաթիկները զբօսցնելու համար, ծանօթ հացագործ Յակոբ արպարին քիւֆէներուն երկու կողմը լեցնելով՝ փողոցները կը պտըտցնեն կոր: (Կուկուլիկ կո՛ւ ... հոգաբարձութիւն. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Նկատելով որ թաղին Աղբատինամը լի ու լի չի կրնար կոր կատարել խալիլներու քէօշէն թէղպի քաշող պօշկէզներուն անամէջ պօռտախօսութիւնները, որոշուեցաւ այդ պաշտօնին համար պաշտօնեաները Ուզուն չարչիի չըխըխճիներուն պատրաստել տալ ...:

ԳԱՏԸ-ԳԻՒԴ. — Շնորհալի օրիորդի մը ֆօնսեռու եփքուա սլուզը ուշ հասնելուն համար յիշեալին շիղերը խանգարուած ըլլալուն, բանկառու մասեօգի մը պէտք կայ:

ՕՐԹԱ-ԳԻՒԴ. — Բիւջ շատ զարգացած երիտասարդ մը, որ ատենէ մը ի վեր հրէուհիի մը հետ հիօ պիօ յարաբերութիւններ կը մշակէր, անցեալ առաւօտ, օրիորդին պալսրը չըպլախ դրան սեմը չփելը տեսնելով՝ կըսուի թէ ոչ թէ միայն աղջիկը, այլ գիւղն ալ ձգելով՝ ուրիշ արուարձան մը կրուելու միտք ունի: (Սման միւսիւ Սկիւտար մ'անցնիր, մեր աղջիկները բամսակէն չուտ կը բռնկին. Ծ. Լ.):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Մեր սրամիտ աշխատակիցը Յ. Ալիբար, որ այս պահուս Բարիկ կը գտնուի, իր մէկ բարեկամին զրկած քառթ-բօսալէ մը կը տեղեկանանք թէ՛ իր մարմնոյն անխոստովանելի մէկ մասին վրայ օրեւասիօն մը ընել տուէր է:

ՆՈՅՆ. — Ինչպէս սովորութիւն է, Մալիս ամիսին գրաստները չայիւրը կը հանեն, մեր կեղծ գրասէրներէն ոմանք ալ նոյն սխալէմով սխաւ են օթլախիւթիւնը իր զենիթը հասցնել (Մարգիսօֆի Զենիթը չի հասկընաք), ուստի որոշած են ծնրակապ զարնել այդպիսիներուն, որ թարգմանի ոչ թէ ժառրքիւ, այլ՝ fkeouskf:

ԱԼԷՄ-ՏԱՂԻ. — Հոչակաւոր պանդուկապետ Յովակիմ աղան կը խնդրէ մննէ ծանուցանել ամէն անոնց՝ որոնք այս օրերս հոգեթալու միտք ունին, հաճին քառասուն փարայի պեղզին գնելով իրեն տանիլ, որպէս զի ետքը ֆոաքին ետեւի մասին վերայի լէքէները հանէ: (Սխալմամբ Եւֆր ետղի չի տանիք, ուշադրութիւն ... Ծ. Խ.):

ԵՆԵՆԻ-ԳԱՐՈՒ. — Կիրակի իրիկունները պօստանները դիմող երկուսն զբօսաւէրները, կերած մառութիւններուն մէջի ամփօնի աղղեցութիւնն ծունդ ծունդի երբեմն ալ ... գիրկ գիրկի կը քնանան կոր ինչ կըսէք: (Լուս աչքով քունը հոգ չէ, ուշադրութիւն ըրէք որ գիշերը հոգ չի մնան. Ծ. Լ.):

ՍԱՌԸ-ԵՍՐ. — Հոս անցեալ օր տունտես եկող աղա մը երբ պարապ տուն մը կը պտըտէր, պատին վրայ իւֆիւր իւֆիւր հալաւար, քանցան ընեմ հապա սաւը կարդալով՝ ետ կեցաւ ետղլըթէն, պատիւը վրայ չի տալու համար: (Կնկանդէ չէս հաւատար, ճէպը դիւր տէ չարչի տար. Ծ. Խ.):

Արսօնաշէր ԱՐՄԷՆ ԼՈՒՐԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ՍՍՏՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասէսի քիւ 52:

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ

Արսնց, Կանանց և Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ և Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համան, Թոփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ
տոկոսութեամբ և գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախողոց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց թելքոններու
և տղայոց շիք և գիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ միջերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 շրջ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—32



ԱՌԻԹԷՆ

[ՕԳՏՈՒԵՑԷՔ

[ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵՆ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԴՈՒԼԵԱՆԻ

[ՃԵՐԱՅ ԿԵՅ ԽԱՆԻՑ]
ԵԱԿ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Ձինասանէ, Հնդկասանէ, Ճապոն եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըրձ
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտուցէք մանաւանդ իրենց յաճ
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մտաւային:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵՍԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒՄԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱՍ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց. համար	»	»	27 ի»
Արսասանան	»	»	6 Ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՅԷ

ՊԱՆԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապը-Ալի հասկսի Ասասուրեան տպարան թիւ 52.

Գաւառներու մէջ գործախախտ կը փնտուռի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է զրկուին կամ Օսմ. Մանաթութով և կամ բաթայի փութով 20 հաւաք
20 զրուշի հաշուով:

ՄԵԾ ԿԱԶՄԱՏՈՒՆ ՀԵՐԵԹԻԿ ՊՕՅԱՃԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի հասէսի քիւ 50

Սոյն առաջնակարգ կազմատունը՝ որ մօտ երեսուն տարուան հաստատութիւն մըն է, իր գեղեցիկ գործերովը, մաքրութեամբը և արագութեամբը արդէն մեծ համբաւ չահած և գրաւած է վրաստանութիւնը ամէն անոնց՝ որոնք փորձով հաստատած են այս առաւելութիւնները:

Հերթիկ էֆ. Պոյաճեան այս անգամ Ներոպայէն բերել տուած ըլլալով արհեստին կատարելագործեալ կարգ մը մեքենաներ, այսօր ի վիճակի է մրցիլ մայրաքաղաքիս բոլոր կազմարարներու արտադրած գործերուն հետ:

Անգամ մը փորձելը բաւական է:

ԼՈՅՍ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՉԱՆԴԷՍ

ԳՐԱԿԱՆ, ԻՄՍԱՏԱՌԻՐԱԿԱՆ ԵՒ
ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՖ. ԴԱՅՍԷՐԵՍԱՆ
ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

«ԼՈՅՍ»՝ օրուան Գրականութեան օղկանը, իր սովորական ճոխ նիւթերէն և ինքնատիպ լուսանկարներէն զատ կը հրատարակէ նաեւ բացառիկ թիւեր՝ ալ աւելի խնամոտ ու ճոխացեալ, որոնցմէ կրնան օգտուիլ անոնք՝ որոնք կը բաժանորդագրուին:

Պօլիսի համար 50 Դրշ.

Գաւառի համար 60 »

Արտասահման՝ 12 փոստը.

ՀԱՍՅԷ՝ Պապը-Ալի ճատաէսի թիւ 38,
Մանգումե օրաթերթին Տէր և Տնօրէն Յովհաննէս Ֆէրիտ էֆ. Գայսէրեան.

ԳԱՌՆԻԿ ՔԷԾԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանգ-Բուլօ խան իրւ 2

Նախ փորձառուները, յետոյ խաբուողները միայն գիտեն էթ ո՛րչափ դժուար է, դանել ու գնել ապրանքներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճաշակաւոր և թէ . . . աժան:

Գառնիկ Բէշիշեան վաճառատունըս թօհաֆիէի էն առաջնակարգ ներոպական գործարաններէն բերել տուած է տեսակ տեսակ կանանց և արանց յատուկ ֆանեյաներ, գուլպաներ, քաւիկաներ, ձեռնոցներ, փոկկապներ, բրդեղեններ, ֆիլթիֆու և խիստ ճաշակաւոր ներգնացապիկներ, գլխու շարքեր, քաւ քոսէներ ևլն. ևլն.

Ջերմապէս կը յանձրարենք անգամ մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն դիմելով պիտի հաստատեն թէ՛ գիներու ամանութեան, ճեսակի ազնուութեան և ապրանց տոկունութեան երեք առաւելութիւնները ուրիշ ո՛ր և է տեղ կարելի չէ գտնել: